Հավելված
ՀՀ վարչապետի 2009 թ.
հունիսի 15 -ի N 486 - Ա
որոշման

«Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2008 թ.
հոկտեմբերի 25-ի N 836-Ա
որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով սահմանվում են միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստերի վարման և որոշումների ընդունման կարգն ու պայմանները։

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2. Հանձնաժողովը Հայաստանի Հանրապետությունում Միջազգային առողջապահական (բժշկասանիտարական) կանոնների (այսուհետ՝ կանոններ) ներդրման նպատակով քննարկում է կանոնների ներդրման քաղաքականությանը, ներդրման ռազմավարությանն ու բնագավառին վերաբերող այլ հարցեր։

3. Հանձնաժողովն իր առջև դրված հիմնական խնդիրներին համապատասխան՝

1) կազմակերպում է Հայաստանի Հանրապետության նախարարությունների, պետական կառավարման այլ մարմինների կողմից կանոնների մշակումը և օժանդակում կանոնների ներդրման աշխատանքներին.

2) կազմակերպում է կանոնների ներդրման հարցերին վերաբերող խորհրդաժողովներ, հանդիպումներ.

3) սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում առաջարկություններ կանոնների ներդրման միջոցառումների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ.

4) քննարկում և հաստատում է հանձնաժողովի աշխատանքային պլանները, փոփոխություններ և լրացումներ է կատարում դրանցում.

5) կազմակերպում է կանոնների ներդրման ռազմավարության մշակման աշխատանքները։

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով։ Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության։

5. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին։ Հերթական նիստն սկսվում է օրակարգի հաստատմամբ։

6. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ նիստի մասնակիցների ձայների կեսից ավելի ձայներով։ Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ քվեարկությունների ժամանակ ունի մեկ ձայնի իրավունք։ Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է։

7. Հանձնաժողովի նիստերի արդյունքում կազմված արձանագրություններն ստորագրվում են հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի քարտուղարի կողմից։

8. Հանձնաժողովի նիստերում, բացի հանձնաժողովի անդամներից, իրավունք ունեն ներկա գտնվելու հանձնաժողովի նախագահի կողմից հրավիրված անձինք՝

խորհրդակցական ձայնի իրավունքով։ Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են։ Հանձնաժողովի նախագահի կամ հանձնաժողովի անդամի պահանջի դեպքում նրա առարկությունը կամ վերապահումն արձանագրվում է։

9. Հանձնաժողովն իր լիազորությունների սահմաններում առանձին խնդիրների լուծման նպատակով կարող է ստեղծել աշխատանքային խումբ (խմբեր)՝ ներգրավելով համապատասխան մասնագետների, նրանց տալ հանձնարարականներ։ Աշխատանքային խումբը (խմբերը) կատարած աշխատանքների մասին հաշվետվություն է ներկայացնում (են ներկայացնում) հանձնաժողովին։

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

10. Հանձնաժողովի նախագահը՝

1) հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը։ Իր բացակայության դեպքում հանձնաժողովի նախագահի լիազորությունների իրականացումը հանձնարարում է խորհրդի անդամներից որևէ մեկին.

2) ապահովում է հանձնաժողովի բնականոն գործունեությունը.

3) հանձնաժողովին է ներկայացնում հանձնաժողովի նիստերի օրակարգերի նախագծերը.

4) համակարգում է հանձնաժողովի աշխատանքը։

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

11. Հանձնաժողովի անդամները՝

1) իրավունք ունեն՝

ա. հարցեր ներկայացնելու հանձնաժողովի քննարկմանը,

բ. առաջարկություններ ներկայացնելու հանձնաժողովի գործունեության, ինչպես նաև նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ,

գ. ծանոթանալու հանձնաժողովի նիստերի արձանագրություններին.

2) պարտավոր են՝

ա. մասնակցել հանձնաժողովի աշխատանքերին.

բ. կատարել հանձնաժողովի որոշումները և նախագահի հանձնարարականները։

VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

12. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) ապահովում է հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող փաստաթղթերի և նյութերի պատրաստումը.

2) ապահովում է հանձնաժողովի նիստերի արձանագրության կազմումը.

3) ապահովում է հանձնաժողովի գործունեության մասին տեղեկատվության տարածումը.

4) հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ՝ իրականացնում է այլ լիազորություններ.

VII. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

13. Հանձնաժողովի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ»։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ